ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **14/02/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Արմենակ Միրզախանյանը, Հրաչյա Դանիելյանը, Անի Հարությունյանը, Գևորգ Դավթյանը, Մարինե Գրիգորյանը, Ավագ Ասատրյանը, Հայկ Հակոբյանը, Աննա Ավետիսյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Վարդան Խաչատրյանը, Աննա Կարապետյանը, Անի Սահակյանը, Հրանտ Արշակյանը, Դավիթ Այվազյանը, Նարա Հովհաննիսյանը, Վարդան Մանուչարյանը, Արմեն Խաչատրյանը, Սուսաննա Սահակյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարին փոխարինող՝ Երվանդ Եղիազարյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան նիստի օրակարգի հաստատումը համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ անհրաժեշտություն է առաջացել օրակարգ ներառել ևս 7 /յոթ/ հարց և ընթերցեց այդ հարցերը, որից հետո դրվեց քվեարկության:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը դեմ քվեարկեցին:

Լրացուցիչ 7 /յոթ/ հարցերը ներառվեցին օրակարգ:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2025 թվականի փետրվարի 14-ի հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 124-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին.
   6) Սիսիան համայնքի համայնքային սոցիալական ծրագրին հավանություն տալու մասին.
   7) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանի աշխատակազմի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին.
   8) «Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին.
   9) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Նորավան բնակավայրում գտնվող անշարժ գույքերը միավորել և Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին.
   10) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Ծղուկ բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին.
   11) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի Որոտան փողոց թիվ 3/4 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին.
   12) Տարածք հատկացնելու մասին.
   13) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին.
   14) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 24-ի թիվ 46-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   15) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.
   16) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 91-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին.
   17) Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին.
   18) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Դավիթ Ռուշանի Դավթյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
   19) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Մարինե Սամվելի Գրիգորյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
   20) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Անի Դերենիկի Հարությունյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
   21) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Ավագ Գևորգի Ասատրյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

22) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Աննա Արկադյայի Ավետիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 001-Ա)*

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը դեմ քվեարկեցին:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի ներկայացրած ամենամյա հաշվետվությունը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն 1-6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը մանրամասն ներկայացրեց 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Հարցը դրվեց քվերակության:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 002-Ա)*

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը քվեարկեցին ձեռնպահ:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 124-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 124-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2529953.1 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «եկամուտների գծով՝ 2560641.3 հազար դրամ» բառերով և թվով:
2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 2529953.1 հազար դրամ» բառերը և թիվը փոխարինել «ծախսերի գծով՝ 4289289.6 հազար դրամ» բառերով և թվով:
3) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ» բառերը և թիվը փոխարինել «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 1728648.2 հազար դրամ» բառերով և թվով:
4) որոշման 1-ին կետի հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն 1-ից 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը մանրամասն ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունները և լրացումները: Որոշման նախագծի ընդունումից հետո բյուջեի ծախսային մասը կավելանա 1759336475,6 ՀՀ դրամով:
Ավագանու անդամ Ս. Վարդանյանը առաջարկեց ծառատունկ կազմակերպել և այնպիսի տեսակներ տնկել, որ ջրելու կարիք չլինի:
Տ. Համբարձումյանը պատասխանեց, որ տնկում են, բայց կան տարածքներ, որտեղ չեն կպնում ծառերը:
Հարցը դրվեց քվեարկության:
Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-2
Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 003-Ն)*

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը քվեարկեցին ձեռնպահ:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը հիմնավորեց, որ Տարեկան աշխատանքային պլանի մոնիտորինգի նպատակը 2024թ. պլանավորած աշխատանքների և փաստացի իրականացված ծրագրերի համեմատականի կազմումն է:
Հարցը դրվեց քվեարկության:
Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 004-Ա)*

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը դեմ քվեարկեցին:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 14-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 005-Ա)*

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը դեմ քվեարկեցին:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով ու 34-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.
   1) որոշման 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների,
   2) որոշման թիվ 12 հավելվածը լրացնել «57» տողով՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավորի քանակ	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի

57	Հատուկ աղբատարի վարորդ	1	1	154000	154000

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 1-ից:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 006-Ա)*

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը դեմ քվեարկեցին:

ԼՍԵՑԻՆ

ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 48-րդ հոդվածի պահանջներով և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների պահանջներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի համար մշակված համայնքային սոցիալական ծրագրին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ա. Կարապետյանը զեկուցեց, որ օրենսդրության պահանջներից ելնելով այսուհետ համայնքները պարտադիր պետք է ունենան իրենց համայնքային սոցիալական ծրագիրը, որում պետք է ներառված լինեն համայնքի գնահատված կարիքները և այդ կարիքների բավարարման ուղղությամբ համայնքների կողմից ձեռնարկվելիք քայլերը: Ավելի մանրամասն ներկայացրեց ծրագրի կարիքներն ու առաջնահերթությունները:

Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 007-Ա)*

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը դեմ քվեարկեցին:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.5-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքապետարանի աշխատակազմի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ծրագրի նպատակը համայնքի ՏԻՄ-ում և համայնքապետարանի աշխատակազմում տեղական հակակոռուպցիոն քաղաքականության պատշաճ իրագործման ապահովումն է:
Որոշման նախագիծը դրվեց քվերակության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 008-Ա)*

Ավագանու անդամ Դ. Դավթյանը քվեարկեց ձեռնպահ:

ԼՍԵՑԻՆ

«ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՐԱՆՍՊՈՐՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 52-րդ, 56-րդ, 58-րդ, 59-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 10-րդ և 11-րդ հոդվածներով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հիմնադրման միջոցով ստեղծել «Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սահմանել «Սիսիան համայնքի տրանսպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ ք. Սիսիան, Սիսական փողոց շենք 41:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսության ծանրաբեռնվածության պատճառով ստեղծում են նոր ՀՈԱԿ, որում ամբողջ տրանսպորտային միջոցները կներառվեն, որպեսզի աշխատանքները ավելի հետևողական և բարեխիղճ կատարվի, իսկ բնակարանային կոմունալ տնտեսությունը զբաղվելու է աղբահանության և սանմաքրման, հետագայում նաև կանաչապատման աշխատանքներով:
Ջ. Մարգարյանը հարցրեց, արդյո՞ք ավելանում են միջոցները և գործելու է ներհամայնքային տրանսպորտը:
Հ. Առաքելյանը պատասխանեց, որ այո միջոցները ավելանում են և 4 երթուղային է աշխատելու, ավտոաշտարակ, ինքնաթափ են ձեռքբերելու:
Ա. Աղաջանյանը ներկայացրեց, որ Գորայքում չգրանցված բեռնատար է եղել:
Հ. Առաքելյանը պատասխանեց, որ գույքացանկում ներառված է, այս պահին չի աշխատում:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 009-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 29-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Նորավան բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքեր՝ 0.50974հա (ծածկ.՝ 09-068-0038-0003) և 0,58604հա (ծածկ.՝ 09-068-0038-0002) մակերեսով հողամասերը միավորել և նոր դպրոցական շենքի կառուցման և սպասարկման նպատակով նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 08-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Նորավան բնակավայրում գտնվող անշարժ գույքը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին» թիվ 107-Ա որոշումը:
3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Մանուչարյանը զեկուցեց, որ 2 ծածկագրերով հողամասերը միավորում են և նվիրում ՀՀ-ին:
Դ. Դավթյանը հարցրեց, եթե նվիրաբերում եք ՀՀ-ին, դառնում է 1 վկայական, իսկ բաժանորդ ո՞նց է լինելու:
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Խաչատրյանը պատասխանեց, որ մինչև շենքի հանձնելը գործարքը կատարելու է քաղաքաշինության կոմիտեն, հետո լինելու է 1 բաժանորդ:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 010-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՂՈՒԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Ծղուկ բնակավայրի համակցված փաստաթղթում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող 0.0201հա բնակավայրերի բնակելի կառուցապատման, 0.096473հա բնակավայրերի բնակելի կառուցապատման և 0.0045հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 011-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՐՈՏԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի համակցված փաստաթղթում կատարել փոփոխություն և քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,002389հա հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Մանուչարյանը զեկուցեց, որ շենքը մեկն է, բայց ունի 2 վկայական: Ամբողջ կառույցի հողի կեսը արտադրական է, մյուս կեսը բնակավայրի բնակելի կառուցապատման հող է:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 012-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով Նորվարդ Ստեփանի Խաչատրյանի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի սեփականություն հանդիսացող Շաղատ բնակավայրի 1-ին փողոց, թիվ 6 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքից՝ 77.8քմ մակերեսով տարածքը՝ չօգտագործվող լվացքատան շենքը (համաձայն հատակագծի), 5 տարի ժամկետով, վարձակալական հիմունքներով տրամադրել Նորվարդ Ստեփանի Խաչատրյանին և տարեկան վարձավճար սահմանել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 013-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Բաց մրցույթով, 2025 թվականի ընթացքում, 25 տարի ժամկետով, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման նպատակով վարձակալության տրամադրել Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. Խաչատրյանը զեկուցեց, որ ապօրինի օգտագործված և հայտնաբերված հողերն են, որոնք արդեն վկայականներ ունեն, պետք է օրինականացվի և դրվի մրցույթի: Մրցույթի կարող է մասնակցել ՀՀ ցանկացած քաղաքացի:
Ս. Վարդանյանը հարցրեց, արդյո՞ք համայնքում հնարավոր է շարժական սպանդանոց ունենալ:
Ա. Խաչատրյանը պատասխանեց այո, նման ծրագիր նախատեսել են:
Դ. Դավթյանը հարցրեց, այդ հողերը մինչև հիմա օգտագործվե՞լ են:
Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ մի մասը օգտագործվում են:
Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 014-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի ԹԻՎ 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 24-ի «Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի մրցութային հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 46-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

   «1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի մրցութային հանձնաժողով և հաստատել անհատական կազմը.
   1) Դ. Հարությունյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ, աճուրդավար,
   2) Ա. Խաչատրյան - աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
   3) Վ. Մանուչարյան - աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ, հանձնաժողովի անդամ,
   4) Կ. Մուրադյան - աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
   5) Դ. Այվազյան - աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
   6) Ս. Մնացականյան - աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, արձանագրող,
   7) Լ. Կոստանյան - աշխատակազմի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ,
   8) Հ. Քարամյան – աշխատակազմի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ,
   9) Ս. Սահակյան – աշխատակազմի առաջատար մասնագետ /իրավաբան/, հանձնաժողովի անդամ,
   10) Ա. Միրզախանյան - համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ»:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 015-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մարտի 14-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 016-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 91-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասով ու 34-րդ հոդվածով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում աղբահանության ևսանիտարական մաքրման կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 91-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացում ու որոշման 3-րդ կետի 3-րդ հավելվածի կարգի վերջին պարբերության «երեքշաբթի օրը՝» տողի «Բնունիս, Տոլորս» բառերը հանել և «չորեքշաբթի օրը՝» տողի «Լեռնաշեն» բառից հետո լրացնել «Բնունիս, Տոլորս, Ախլաթյան, Տորունիք, Դաստակերտ, Նժդեհ» բառերը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Մանուչարյանը զեկուցեց, որ 4 բնակավայրեր ևս ներառում են աղբահանություն իրականացնելու համար:
Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 017-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 993-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 2037-Ն որոշումներով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմին հատկացված 54.500.000 ՀՀ դրամով ձեռք բերված աղբատար մեքենան (հետևի բարձմամբ):
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 018-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԴԱՎԻԹ ՌՈՒՇԱՆԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով ու նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգի 232-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Դավիթ Ռուշանի Դավթյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ջ. Մարգարյանը առաջարկեց հետաձգեն, բոլորը ներկա գտնվեն, ճշտությունը նայեն, հետո: Համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ ամեն ինչ ճիշտ է արված: Տեղեկանքը կցված է, թե չորրորդ նստաշրջանում ավագանիները քանի նիստից են բացակայել:

Հայտարարվեց 5 րոպե ընդմիջում:

Ընդմիջումից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-10 Դեմ-2 Ձեռնպահ-1

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ. ավագանու 21 անդամներից նիստին ներկա ավագանու 13 անդամների քվեարկության արդյունքներով՝ կողմ-10, դեմ-2, ձեռնպահ-1 որոշման նախագիծը չընդունվեց:
Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը քվեարկեցին դեմ, իսկ Ս. Վարդանյանը՝ ձեռնպահ:

Ջ. Մարգարյանը և Դ. Դավթյանը հեռացան նիստերի դահլիճից:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՄԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով ու նկատի ունենալով

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգի 232-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Մարինե Սամվելի Գրիգորյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 019-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՆԻ ԴԵՐԵՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք ի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով ու նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգի 232-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Անի Դերենիկի Հարությունյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 020-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՎԱԳ ԳԵՎՈՐԳԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով ու նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգի 232-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Ավագ Գևորգի Ասատրյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 021-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՆՆԱ ԱՐԿԱԴՅԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով ու նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու կանոնակարգի 232-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ Աննա Արկադյայի Ավետիսյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 022-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Երվանդ Եղիազարյանը _____